

ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ

ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Ապրիլ 2023

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Ապրիլը միայն Հայոց Ցեղասպանությունը յիշատակելու ամիս չէ: Ապրիլը պահանջատիրության ամիս է: Ապրիլը մենք մեզ քննելու ամիս է:

Աշխարհի վրայ չկայ արդարություն: Եթէ արդարություն ըլլար, անպատիժ չէր մնար թուրքը: Ընդունինք, որ աշխարհի վրայ ոչինչ յաւերժական է: Այսօր զօրաւոր թուացող պետություն մը կրնայ փլիլ, ինչպէս որ պատահած է պատմութեան ընթացքին: Պարզապէս աշխարհի վրայ ուժը զօրաւորին է: Եւ դուն, եւ մենք բոլորս կրնանք ըլլալ այդ զօրաւորը, եթէ մեզմէ ամէն մէկը իր «ես»-ը մէկ կողմ դրած, աշխատի «մենք»-ի գաղափարով, աշխատի միասնական ոգիով: Մեր բոլոր գրագէտներն ու բանաստեղծները շեշտեր են կարեւորութիւնը այդ միասնականութեան: Ահա թէ ինչ գրած է Եղիշէ Չարենց. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»: Ահա թէ ինչ ըսած է Յակոբ Սիրունի. «Այլեւս հասած կը նկատեմ վայրկեանը, իրականացնելու պատգամը Չարենցի՝ «հոգեկան միութիւն»... Առանց հոգեկան այդ միութեան, մի՛ հաւատաք, որ մեր երագները կ'իրականանան. կէս կը մնան: Որպէսզի անոնք կէս չմնան, պէտք է մենք կէս չմնանք, պէտք է ամբողջութիւն մը կազմենք»:

Ըլլանք միասին, յանուն հարիւր հազարաւոր մեր հերոսներուն եւ գրագէտներուն, որոնք պայքարեցան հայրենիքի ազատութեան համար:

Ըլլանք միասին, որպէսզի վերատիրանանք մեր իրաւունքներուն. մեր ինքնութեան եւ մեր մշակոյթի պահպանման համար:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ



1915 թուականին Օսմանեան կայսրութեան իթթիհատական կառավարութեան ղեկավարները՝ Մեհմետ Թալէաթ, Իսմայիլ Էնվեր, Ահմէտ Ճեմալ, Մէհմէտ Նազըմ, Պեհաէտտին Շաքիր, Սայիտ Հալիմ եւ ուրիշներ գաղտնի ժողով մը գումարեցին: Այդ ժողովին ծրագրեցին, թէ ինչպէ՛ս կրնան հայ ժողովուրդը բնաջնջել: Անոնք Համաշխարհային Առաջին պատերազմը ամէնէն յարմար առիթը նկատեցին, որ հայ ժողովուրդը ջարդելով ամբողջովին ոչնչացնեն: Այդ ծրագիրը իրականացուցին հետեւեալ ձեւով.


Նախ հայ պետական պաշտօնեանները գործէ հանեցին: Յետոյ օսմանեան բանակի հայ սպաները ձերբակալեցին, նոյն բանակի հայ զինուորներուն զէնքերը գրաւեցին եւ զանոնք խումբ-խումբ ընելով իբրեւ բանուոր տարին ու սպաննեցին:

Հայերու ցեղասպանութիւնը լաւագոյն ձեւով իրագործելու համար, բանտերէն ազատ արձակեցին յանցագործ ոճրագործներ:

Ապրիլ 24-ին ձերբակալեցին հայ գրողները, բանաստեղծները, բժիշկները, փաստաբանները եւ ազգային նշանաւոր դէմքեր, որոնք անմարդկային չարչարանքներու ենթարկուելէ ետք, կախուեցան կամ վայրագաբար սպաննուեցան:

Այսպէս երբ հայերը զրկուեցան իրենց զինուորական ուժերէն եւ մտաւորականներէն, հայկական հողերուն վրայ մնացին միայն ծերերը, հիւանդները, կիները եւ երեխաները: Բոլորն ալ թուրք զինուորներու զէնքի ուժին տակ, առանց ուտելիքի ու առանց ջուրի քշուեցան դէպի անապատները, ուր ամէն օր ենթարկուելով նոր յարձակումներու ու չարչարանքներու սպաննուեցան:

1915-ի Հայոց Ցեղասպանութեան զոհ գացին աւելի քան մէկ ու կէս միլիոն հայեր:




ԿԸ ՅԻՇԵՆՔ ՈՒ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ

1915-ին թուրքը իր բարբարոսությունը կատարեց Հայոց Յեղասպանությունը կազմակերպելով: Աշխարհը լուռ մնաց, բայց հայ վրէժխնդիր կամատրներ թուրքը անպատիժ չձգեցին: Եկաւ Սողոմոն Թեհլիրեանը, որ գետին տապալեց Թալէաթ փաշան: Եկաւ Արշալիր Շիրակեանը, որ սպաննեց Սայիտ Հալիմ փաշան: Յետոյ Արշալիր Շիրակեանը եւ Արամ Երկանեանը միասին սպաննեցին Պեհաւետտին Շաքիրը եւ Ճէմալ Ազմին: Եկաւ Միսաք Թորլաքեանը եւ գետին փռեց Ճիվանշիրը: Եկան Ստեփան Ծաղիկեանն ու իր ընկերները եւ սպաննեցին Ճէմալ փաշան:

1988 Փետրուարին, ազերին իր վայրագությունը կատարեց Սումկայիթի մէջ 17000 հայերու տեղահանությունն ու ջարդը կազմակերպելով: Ծայր առաւ արցախեան ազատագրական պայքարը իր հազարաւոր հայ քաջերով:

2020 Սեպտեմբերին, ազերին Թուրքիոյ օգնութեամբ եւ այլ վարձկան զինուորներով ռմբակոծեց Արցախի քաղաքները, Ֆոսֆորային ռումբերով այրեց Արցախի անտառները, անօդաչու սարքերով յարձակեցաւ Արցախի բնակչութեան վրայ: Առիւծի պէս քաջ զինուորներ 44 օր պատերազմեցան պաշտպանելու համար հայրենի հողը: Լուռ էր աշխարհը: Բայց հայը լուռ պիտի չմնայ: Ան Հայաստանի, Արցախի թէ Սփիւռքի մէջ, իր բոլոր ուժերով տէր պիտի կանգնի իր իրաւունքներուն. պիտի յիշէ իր նահատակները եւ պիտի պահանջէ ոճրագործ թուրքին պատիժն ու անոր կատարած ոճիրներուն հատուցումը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ, ԴԷՊԻ ԾԻԾԵՌՆԱԿԱՐԵՐԴ

Ծիծեռնակաբերդը Հայոց Յեղասպանութեան զոհերուն նուիրուած յուշարձանն է: Ամէն տարի Ապրիլ 24-ին հարիւր հազարաւոր հայեր եւ օտարներ կ'ուղղուին հոն՝ ոգեկոչելու 1915 թուականին Օսմանեան կայսրութեան իրագործած Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակը:

44 մեթր բարձրութեամբ սիւնը կը խորհրդանշէ հայերու վերածնունդը: Շրջանի կեդրոնը յաւերժական կրակն է: Անոր շուրջ 12 քարէ սալերը կը ներկայացնեն Արեւմտեան Հայաստանի 12 հայաբնակ նահանգները, որոնք ներկայիս կը գտնուին Թուրքիոյ տարածքին մէջ:

Յուշարձանին շուրջը տարածուող այգիին մէջ կայ պատ մը, որուն վրայ փորագրուած են ջարդերու ենթարկուած քաղաքներու եւ գիւղերու անունները:

Յուշարձանի տարածքին վրայ կայ նաեւ թանգարան մը, ուր կարելի է գտնել լուսանկարներ եւ տեղեկութիւններ 1915-ի ջարդերուն մասին:

Յուշահամալիրի ճարտարապետներն են Արթիւր Թարխանեանն ու Մաշուր Քալաշեանը:



ԳԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ, ԴԷՊԻ ՕԹԹԱՈՒԱ

Ամէն տարի Ապրիլ 24-ին, հազարաւոր գանատաբնակ հայեր Մոնթրէալէն, Լաւալէն, Թորոնթոյէն, Գեմպրիճէն, Համիլթընէն, Սենթ Գաթրինզէն եւ այլ վայրերէ կ'ուղղուին դէպի Օթթաւա՝ յիշատակելու Հայոց Յեղասպանութեան տարելիցը, արթուն պահելու պահանջատիրական ոգին եւ մասնակցելու այս առթիւ կազմակերպուած քայլարշաւին:

Առաջին հերթին անոնք կը համախմբուին Գանատայի խորհրդարանին առջեւ, ուր խօսք կ'առնեն Հայ Դատի թէ կուսակցական, եկեղեցական եւ միութենական ներկայացուցիչներ, խօսք կ'առնեն նաեւ գանատացի քաղաքական դէմքեր:

Ապա համախմբուած հայութիւնը, Հայաստանի, Արցախի, Գանատայի, Քեպէգի դրօշներով եւ պահանջատիրական խօսքերով կը քալէ դէպի թրքական դեսպանատուն: Հոն տեղի կ'ունենան հայկական հայրենասիրական երգեր ու ասմունքներ: Մթնոլորտը խանդավառութիւն կը ստեղծէ եւ համախմբուած հայութիւնը միասնաբար կը վերանորոգէ պահանջատիրութեան իր ուխտը:

Այս տարի եւս Հայ Դատի կեդրոնական յանձնախումբի կազմակերպութեամբ, Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023-ին, առաւօտեան ժամը 9:00-ին պիտի հաւաքուինք Մոնթրէալի եւ Թորոնթոյի Հայ Կեդրոններ, մեկնելու դէպի Օթթաւա: Միացի՛ր ցոյցին:

ԴԱԴԻՎԱՆՔ

Դադիվանքը կը գնուի Դադիվան լեռան լանջին, Թարթառ գետի ձախ ափին: Ան կը կոչուի նաեւ խութավանք, որովհետեւ շինուած է խութի, այսինքն՝ քարաժայռի վրայ:

Այս Վանքը շինուած է 9-13-րդ դարերուն ընթացքին: Անոր հիմը դրած է Սուրբ Դադին՝ Թադէոս առաքեալի աշակերտը, որ Քրիստոնեութիւնը տարածած էր Հայաստանի մէջ առաջին դարուն:

Հետաքրքրական է, որ այս վանքի Սուրբ խորանին տակ, Յուլիս 2004-ին գտնուած է Սուրբ Դադիի գերեզմանը:

Հետաքրքրական է նաեւ, որ 12-րդ դարուն մեր մեծ մտաւորականներէն Մխիթար Գոշը հոն ապրած է եւ հոն է, որ աշխատած է իր «Գիրք Դատաստանի» աշխատութեան վրայ:



Դադիվանքը ունեցած է 2000 քիլոմէթր քառակուսի տարածք: Սակայն 1960-ական թուականներուն, Ատրպէյճանի իշխանութիւնները վանքի տարածութեան վրայ հիմներ են գիւղ, որուն բնակիչները վնասած են վանքի համալիրի շէնքերը եւ որմանկարները (պատի վրայ իւղաներկով, ջրաներկով պատկերուած նկարները):

Մեր հերոսներուն շնորհիւ, Դադիվանքը ազատագրուած է 1993 Մարտ 31-ին եւ վերաբացուած է 1994-ին: Իսկ 2004-ին սկսած է վերանորոգման գործը հայ-ամերիկեան գործարար Էդել Հովնանեանի օգնութեամբ:

2020-ի պատրագմէն ետք, վանքը ինկած է Ատրպէյճանի ձեռքը, բայց կը մնայ համեմատաբար ապահով վիճակի մէջ, շնորհիւ ռուս խաղաղապահ ուժերուն:

ՄԵԾ ՊԱՀՔ

Մեծ Պահքը կը սկսի Բարեկենդանին եւ կը վերջանայ Զատիկին:

Պահքին մենք մեր կամքով մեզ կը զրկենք մասնաւորաբար կենդանիէն եկող ուտելիքներէ: Պահք պահելով, հոգ տարած կ'ըլլանք մեր մարմնի եւ հոգիի առողջութեան հաւասարապէս: Մեր մարմինը առողջ կ'ըլլայ, հաւատքը՝ ամուր, խիղճը՝ հանգիստ, կամքը՝ պինդ:



ԶԱՏԿՈՒԱՆ ՀԱՒԿԻԹԸ

Հաւկիթը խորհրդանշանն է Յարութեան ու վերածնունդին, այդ պատճառով Զատիկին սովորութիւն է իրարու հաւկիթ նուիրելը: Զատկուան հաւկիթը կը ներկենք մասնաւորաբար կարմիր գոյնով, որպէս նշան՝ մարդկութեան համար Քրիստոսի թափած արեան, սակայն շատեր մանուկները ուրախացնելու համար հաւկիթը կը ներկեն նաեւ այլ գոյներով:




«WE ARE OUR MOUNTAINS»

Շաբաթ, 18 Մարտ 2023-ին մոնթրեալաբնակ հայութիւնը, «Հայ Տուն» ծրագրի կազմակերպութեամբ, առիթը ունեցաւ ներկայ ըլլալու ուրուկուէյցի քեմադրիչ Federico Lemos-ի «We Are Our Mountains» ֆիլմի ցուցադրութեան:

Ֆիլմը Արցախի մասին վաւերագրական ժապաւէն մը ըլլալուն, կ'անդրադառնայ Արցախի դատին ու հայ ժողովուրդի իրաւունքներուն մասին:

ԱՐՋԵՐ

Արջերը մսակեր կաթնասուններ (mammifère) են: Երկիր մոլորակին վրայ կան 8 տեսակ արջեր: Այդ արջերուն մէկ տեսակը՝ գորշ արջը, կարելի է գտնել Հայաստանի մէջ: Արջերը ունին մեծ գլուխ, սուր դունչ եւ հզօր թաթեր: Անոնք կրնան մագլցիլ, լողալ, արագ վազել ու ետեւի թաթերուն վրայ ոտքի կենալով յառաջանալ: Արջերը ունին գերազանց հոտառութիւն եւ լսողութիւն: Անոնք որսի կ'ելլեն երեկոյեան կամ արեւածագին: Ամէնէն վտանգաւոր արջերէն մէկն է սպիտակ արջը:



Ո՞Վ Կ'ՈՒԶԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

Ապրիլ ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկէտն է 8 Մայիս 2023: Հետեաբար, սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝

3401 Oliver Asselin
Montreal, Canada
H4J 1L5

**1-Մեր բանաստեղծներէն որոն կը պատկանի հետեւեալ տողը.
«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:**

- ա) Եղիշէ Չարենցին:
բ) Յովհաննէս Թումանեանին:
գ) Սիլվա Կապուտիկեանին:

2- Օսմանեան կայսրութեան ղեկավարներուն համար, հայ ժողովուրդը ջարդելու ամէնէն յարմար առիթը երբ էր:

- ա) Պերլինի վեհաժողովն էր:
բ) Համաշխարհային Առաջին պատերազմն էր:
գ) Ռուս-թրքական պատերազմն էր:

3- Հայերու ցեղասպանութիւնը լաւագոյն ձեւով իրագործելու համար, թուրքերը հայերուն զէնքերը գրաւեցին, բանտերէն ազատ արձակեցին յանցագործ ոճրագործներ եւ հայ գրողները, բանաստեղծներն ու ազգային նշանաւորը ղէմքերը սպաննեցին:

- ա) Ճիշդ:
բ) Սխալ:

4- Ո՞վ սպաննեց Թալէաթ փաշան:

- ա) Արշալիր Շիրակեանը:
բ) Միսաք Թորլաքեանը:
գ) Սողոմոն Թեւիլիբեանը:

5- Արշալիր Շիրակեանը եւ Արամ Երկանեանը միասին սպաննեցին...

- ա) Թալէաթ փաշան:
բ) Պեհաէտտին Շաքիրը եւ Ճէմալ Ազմին:
գ) Ճէմալ փաշան:

6- Հայոց Ցեղասպանութեան զոհերուն նուիրուած յուշարձանը կը կոչուի.

- ա) Եռաբլուր:
բ) Ծիծեռնակաբերդ:
գ) Կոմիտասի այգի:

7- Ի՞նչ կը խորհրդանշէ Ծիծեռնակաբերդի 44 մեթր բարձրութեամբ սիւնը:

- ա) Հայերու վերածնունդը:
բ) Հայերու ջարդը:
գ) Հայերու ապստամբութիւնը:

8- Դադիվանքին հիմը ով դրած է:

- ա) Սուրբ Դադին՝ Թադէոս առաքեալի աշակերտը:
բ) Սուրբ Յակոբը:
գ) Մխիթար Գոշը:

9- Յուլիս 2004-ին, որոն գերեզմանը գտնուեցաւ Դադիվանքի Սուրբ խորանին տակ: ա) Մխիթար սպարապետի գերեզմանը:

- բ) Թադէոս առաքեալի գերեզմանը:
գ) Սուրբ Դադիի գերեզմանը:

10- Ո՞ր արջը կարելի է գտնել Հայաստանի մէջ:

- ա) Սպիտակ արջը:
բ) Գորշ արջը:
գ) Դեղին արջը:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757

Email: sylva@horizonweekly.ca

Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի Թիւր պատրաստեց Յուշիկ Բաբունեան Ձեւայղացք՝ Լորի Խաչերեանի